Ուսանողության հետտարվորաշխատանքը:

Հաշվետու տարում նկատվել է ամբիոնի կողմից դասավանդվող առարկաներով գիտական աշխատանքներ գրելու գործընթացի նկատելի աշխուժացում: 2017թ. հոկտեմբերի 2-6-ը ԵՊՀ ՈԻԳԸ 4-րդ միջազգային գիտական նստաշրջանում՝ նվիրված ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 70-րդ տարեդարձին ուսանողները և ասպիրանտները հանդես են եկել զեկուցումներով, որոնք հետագայում երաշխավորվեցին տպագրության.

1. Սամվել Ջաբադյան /բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող/
<<Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության որոշ հիմնախնդիրները ՀՀ-ում>>
2. Տաթևիկ Սողոյան /բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող/ <<Կրոնի ազատության իրավական կարգավորումները>>
3. Վիկտորյա Հակոբջանյան /բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող/
<<Եվգենիկայի լիրատման որոշ հիմնախնդիրները ՀՀ-ում>>
4. ՕլգաԳրիգորյան /բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող/
<<Սահմանադրական դատարանի որոշումների կատարման հիմնախնդիրները>>
5. Միհրան Բուլղադարյան /բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող/
<<Համամասնական ընտրակարգի առանձնահատկությունները Ազգային ժողովի ընտրություններում>>

2018թ.ապրիլի 16-20-ը, ԵՊՀ ՈԻԳԸ 5-րդ միջազգային գիտական նստաշրջանում՝ ուսանողները և ասպրանտները հանդես են եկել զեկուցումներով, որոնք հետագայում երաշխավորվել են տպագրության.

1. Զավեն Վարտումյան <<Գենդերային հավասարության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>>
2. Իգոր Միրզախանյան -<<Պետական պարզների և պատվավոր կոչումների իրավական կարգավորման արդի յիմնախնդիրները ՀՀ-ում>>
3. Լիլիթ Վարազյան–մագիստրանտ, <<<<Ձևական սխալ>> ինստիտուտի կիրառման հիմնախնդիրները>>
4. Հասմիկ Հակոբյան–մագիստրանտ <<Հանրապետության նախագահը՝ որպես սահմանադրական վերահսկողության սուբյեկտ>>
5. Մարիա Պետրոսյան–բակալավր <<Մարդու իրավունքների սահմանափակման հիմնախնդիրը ՀՀ սահմանադրական բարեփոխումների համատեքստում>>
6. Մարինե Խաչատրյան–բակալավր <<Օտարերկրացիների վարչաիրավական կարգավիճակը ՀՀ-ում>>
7. Նարե Սմբատյան–բակալավր<<Հանրային իրավական դրամական պահանջներով արտադատական կարգով բռնագանձման իրականացման ինստիտուտի սահմանադրականության հիմնահարցերը >>

8. Սամվել Ջաֆադյան – մագիստրանտ <<Նոտարի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները>>
9. Վիկտորյա Հակոբջանյան – բակալավր <<Վարչական վարույթի առանձնահատկություններն ընտրական հանձնաժողովներում>>
10. Լիլիթ Պետրոսյան – բակալավր <<Խորհրդարանը ՀՀ-ում՝ խորհրդարանական կառավարման պայմաններում>>
11. Կարեն Հակոբյան /ասպիրանտ/ <<Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր>>
12. Գոհար Մելոյան /հայցորդ/ <<Շրջակա միջավայրի պահպանությունը սահմանադրական զարգացումների համատեքստում>>:

Սա մեզ համար ողջունելի դրական տեղաշարժ է, հաշվի առնելով, որ տևական ժամանակ ուսանողները հազվադեպ էին ընտրում թեմաներ հանրային իրավունքից, սակայն, կարծում եմ, այս ոլորտում սրանք դեռևս բավարար ցուցանիշներ չեն: Հուսով եմք, հետագայում այս հարցում մեր նախաձեռնությունն արդյունքներ կտա:

Ուսանողության հետ տարվող աշխատանքը կազմակերպվում է մի քանի ոլորտում:

որոնցում աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում արդիական ու հրատապ հարցադրումներով զինված և քննարկային բնույթի կազմակերպություններին:

(խնդիրների հակողմանի քննարկումներ, բանավեճեր, դատախազներ, այլ կառույցների մասնագետների հետ հանդիպումներ և այլն)

կազմակերպվել է այդ բնույթի միջոցառում: Ուսանողական ՈԻԳԸ-ն ևս այս հարցում նախաձեռնողական կեցվածք ունի: Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային դրույթները» թեմայով սեմինարի գաղափարն ամբողջովին իրենցն է եղել: 03.05.2018թ. կազմակերպվել է նաև **Ազգային ժողովի ուսումնական նիստ**: Այս միջոցառումը հնարավորություն տվեց ուսանողներին իրենց ստացած գիտելիքները պրակտիկայում կիրառելու հնարավորություններ ձեռք բերել: Աժ ուսումնական նիստին ներկա էին նաև մի խումբ աշակերտներ, որոնց նույնպես հետաքրքրեց նիստը:

Գիտահետազոտական աշխատանքներում համագործակցության եղանակները, արտահամալսարանական աշխատանքները:

Գիտահետազոտական հարցադրումներով ամբիոնը համագործակցում է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ որոշակի փորձ ունեցող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Ինչպես արդեն ասվեց, ֆակուլտետի ղեկավարության աջակցությամբ սկիզբ է առել նաև Գերմանիայի և Ֆրանսիայի ուսումնական հաստատությունների հետ համագործակցության գործընթաց:

Հաշվետու տարում ամբիոնի մի շարք դասախոսներ և ասպիրանտներ (Գ. Դանիելյանը և Ն. Ղազարյանը) ներգրավվել են Սփյուռքի նախարարության՝ «Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը (ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)» ծրագրի աշխատանքներին: Նշված ծրագրի շրջանակներում հրատարակվել է նույն անվամբ վերլուծական մենագրություն:

2017 թ. դեկտեմբերի 1ին ամբիոնի երկու դասախոսներ (Գ. Դանիելյան և Հ. Ենգոյան) և Սահմանադրական դատարանի երկու դատավորների (Ա. Գյուլումյան և

Հ.Նագարյան) մասնակցությամբ Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի հետ կնքել են պայմանագիր՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգման, դրանց կատարման և ՄԻԵԴ-ի որոշումների հետ համեմատական վերլուծություն իրականացնելու հարցադրումներով՝ 2-րդ հատորը պատրաստելու վերաբերյալ: Ծրագրի համակարգման պատասխանատվությունը վերապահված է Գ.Դանիելյանին: Ծրագրի 1-ին փուլը նախատեսված ժամկետում՝ 2016 թ. նոյեմբերի 30-ին, ավարտվել է, իսկ 2-րդ փուլն ավարտվելու է ս.թ. հուլիսի 15-ին, որն առավելապես նվիրված է ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի որոշումների համեմատական վերլուծությանը: Այս հետազոտությունը Եվրախորհրդի Ստրասբուրգյան փորձագետների դիրքորոշմամբ ճանաչվել է վերջին երեք տարիների ընացքում լավագույն ծրագրերից մեկը:

Ծրագրի առաջին փուլի արդյունքները պատվիրատու կազմակերպության և միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է լավագույններից մեկը:

***Ամբիոնի աշխատանքում տեղագտությունները,
առկա խնդիրները և դրանց լուծման նուբարելավման նուղիները:***

Նպատակահարմար է համակարգված տեսքով առանձնացնել հետևյալ թերություններն ու դրանց բարելավման նուղիները՝

- դրական տեղաշարժ չի նկատվում գիտական հետազոտությունների շրջանակներն ընդլայնելու կտրվածքով, որպես կանոն, դասախոսական կազմը մեծ դժվամությամբ է ձեռնամուխ լինում գիտական աշխատանքների պատրաստմանը,

- բավարար չափով ընդգրկուն չեն ուսանողների մասնակցությամբ արդիական հարցադրումներով բանավեճերը, իսկ այդպիսի կազմակերպելու դեպքերում մյուս ուսանողների մասնակցությունը բարվոք չէ,

առանձին առարկաների դասավանդման համար բացակայում են ոչ միայն հայրենական օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրության հիմնական վրաստատված նորացված դասագրքերը, այլև ուսումնական ձեռնարկները (խոսքը, հատկապես, վերաբերում է «Վարչական պատասխանատվությանը» և «Հանրային ծառայությանը»),

սակավաթիվ են հիմնարար արդիական հիմնախնդիրների գիտական հետազոտությանը նվիրված կոլեկտիվ աշխատանքները,

դեռևս համարժեք չէ արձագանքնակն հայտանկատար օրենսդրական ակտերի ու իրավակ իրադրակտիկայի առնչությամբ: Ցավոք, ամբիոնում ևս երբեմն այն ավանդույթն է տիրում, երբ օրենքները քննադատության թիրախ են դառնում ոչ այնքան օրինագծի տեսքով եղած ժամանակ, որքան, երբ արդեն ընդունվում և կիրառման մեջ են դրվում,

դեռևս ամբողջովին լուծված չէ համալիր դասավանդման բնական ու ընթացքի երաշխավորման համար անհրաժեշտ նյութերի պատրաստման խնդիրը, մասնավորապես, բացակայում են կոնկրետ առարկաների առնչությամբ օրինակելի գործնական խնդիրներ իժողովածուները,

կոնկրետ գործնական պարապմունքների համար անհրաժեշտ ուսումնական ձեռնարկները և այլն:

Մրանքի մնականություններն են.
այլություններն ու բացթողումները կրում են աշխատանքային բնույթ,
որոնք սահմանված կարգով քննարկվում են իրենց լուծումն են ստանում միմյանից հետո
մ աշխատանքային կարգով:

Գիտական նուսումնամեթոդական հրատարակություններիցանկ

Մենագրություն

0

Դասագիրք

0

Ուսումնական ձեռնարկ

0

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. Սփյուռքի Հայ համայնքների իրավական կարգավիճակը (ԵՄ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ), Գ. Բ. Դանիելյան, Ն. Հ. Ղազարյան, ԵՊՀ – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 150 էջ:

Հոդված

1. Գ.Բ. Դանիելյան, Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 1(1)2018, Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջ 58-77:
2. Գ.Բ. Դանիելյան, Սահմանադրական իրավունքների իրացման իրավական մշակույթը, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 2 (23), էջեր 18-32:
3. Գ.Բ. Դանիելյան, Վարչական վարույթի առանձին տեսակների անհրաժեշտությունը պայմավորող չափանիշները, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», Նվիրվում է ՀՀ անկախության 25-ամյակին, Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2017., էջ 69-88:
4. Գ.Բ. Դանիելյան, Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», Իրավագիտություն, Հասարակական գիտություններ, № 3(24), Երևան – 2017, էջ 25-41:
5. Գ.Բ. Դանիելյան, Իրավունքների իրացման ու պաշտպանության իրավական մշակույթի վերաիմաստավորման արդի ուղենիշները, ԼՂՀ դատական իշխանություն, 1(23), Երևան, 2017թ., էջեր 18-27:
6. Վ.Ն. Այվազյան, Սահմանադրականության սիստեմատիկական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1), Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջեր 78-94:

7. Վ.Ն.Այվազյան, Տնտեսական համակարգի սահմանադրաիրավական կարգավորումը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, գլխավոր խմբագիր Գ. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2017թ., էջեր 89-111:
8. Ա.Ա. Մանասյան, Կայուն ժողովրդավարությունը արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1), Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջեր 95-110:
9. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական զարգացումների սահմանադրականությունը որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 1 (25), էջեր 66-70:
10. Ա.Ա. Մանասյան, Ժողովրդավարության դոկտրինն ու դրա վերաիմաստավորումն արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում, ԼՂՀ դատական իշխանություն, Ստեփանակերտ, <<Դիզակ պլյուս>> հրատարակություն, 1 (26), 2018, էջեր 32-39:
11. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական կայունությունը որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, գլխավոր խմբագիր Գ. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2017թ., էջեր 112-122:
12. А.А. Манасян, **Развитие Конституции Республики Арцах как важнейшая предпосылка стабильной демократии**, Сборник материалов 2-ой международной конференции “Проблемы и перспективы международного признания Республики Арцах”, 2017, Ереван, էջեր 68-72:
13. А.А. Манасян, Реформирование института конституционного правосудия в Республике Армения, Сборник материалов конференции “Судебная власть в Республике Армения в свете конституционно-правовых реформ”, 2017, Ереван, էջեր 63-79:
14. Ռ.Ջ. Մախմուդյան, Եզդիների ցեղասպանությունը Հայոց եղեռնի միջազգայնորեն չճանաչման արդյունք, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1), Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջեր 111-129:
15. Հ.Ա. Ենգոյան 2016թ. դեկտեմբերի 16-ի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով ամրագրված ՀՀ գնումների բարեկարգման խորհրդի իրավական կարգավիճակի որոշ հիմնախնդիրներ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի

ժողովածու, 1(1), Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջեր 130-137:

16. Կ. Հակոբյան, Գործի արդարացի քննության իրավունքը որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, Պետությունն իրավունք, Եևան, ԵՊՀ, 2018, № 1 (79), էջեր 33-42:
17. Կ. Հակոբյան, Լսված լինելու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 1(1), 2018, էջեր 54-70:
18. Կ. Հակոբյան, Փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, Արդարադատություն, Երևան, 2018, թիվ 2 (43) էջեր 66-73
19. Կ. Հակոբյան, «Հոգատարության սկզբունքը»՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր Օրինականություն, Երևան, 2018, թիվ 104, էջեր 44-49
20. Տ.Նահապետյան, Հանրային իրավական դրամական պահանջների կատարման վարույթի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 1(1), 2018, էջեր 112-129:

***ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
Մահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ՝ Կ. Այվազյան***

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում Ուսանողական գիտական ընկերության կողմից և մասնակցությամբ կազմակերպվել են թվով 43 միջոցառումներ, այդ թվում՝
2 գիտաժողով
2 աշխատաժողով
31 սեմինար-դասընթացներ և հանդիպումներ
2 դատախազ
5 այցելություն
1 մրցույթ

Հիշատակման արժանի միջոցառումներից են՝

«Հաջողության պատմություններ» միջոցառումների շարքը, որի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչների հաջողության պատմություններին և ուղղելու իրենց հարցերը դասախոսներին՝ վերջիններիս անցած ուղու վերաբերյալ:

Կրթությունն արտասահմանում սեմինարը, որի շրջանակներում տարբեր ուսումնական ծրագրերով արտասահմանում կրթություն ստացած ուսանողներն ու դասախոսները կիսվեցին իրենց փորձով

Եվրոպայի իրավաբան ուսանողների ասոցիացիայի հետ համատեղ իրականացված աշխատաժողովը՝ «Արդարադատության մատչելիություն» խորագրով, ինչպես նաև ԵՊԲՀ իրավաբանական կլինիկայի և ՈՒԳԸ հետ համատեղ կազմակերպված «Բժշկական էթիկան Ֆեմիդայի կշեռքին» խորագրով աշխատաժողովը:

«Ինչպես մասնակցել միջազգային դատախազերի» եռօրյա սեմինարը, որի ընթացքում միջազգային դատախազերի մեր արդեն փորձառու մասնակիցները ուսանողների հետ կիսվեցին իրենց փորձով և գիտելիքներով՝ ապագա դատախազերին ընդառաջ, իսկ սեմինարին մասնակցած ուսանողները սատացան հավաստագրեր՝ հետագայում միջազգային դատախազերում ֆակուլտետի թիմում ընդգրկվելու համար:

Այս կիսամյակ ևս կազմակերպվեցին Գիտական աշխատանքներ կատարելու հմտություններ և Փաստաբանի հմտություններ խորագրով սեմինարները:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դեռևս անցած կիսամյակի դրությամբ նախագծի վերաբերյալ քննարկումը՝ նախագծի աշխատանքային խմբի անդամ պարոն Մեղրյանի հետ:

ՈՒԳԸ-ն շարունակել է կազմակերպել նաև ուսանողների համար անգլերեն լեզվով դասընթացների շարքը, որը լինելու է շարունակական:

Հարկ է հատուկ առանձնացնել ԵՊՀ ՈՒԳԸ կողմից կազմակերպված 2 միջազգային գիտաժողովները, որոնցից հատկապես վերջինին, որը տեղի ունեցավ այս տարվա ապրիլին, ֆակուլտետը մասնակցել է աննախադեպ թվով մասնակիցներով՝ 100-ից ավելի հայտ և շուրջ 80 զեկուցում:

ՈւԳԸ-ն մշտապես ներգրավված է եղել ֆակուլտետի կողմից կազմակերպվող կարևոր միջոցառումներին՝ հանդիպումներ միջազգային իրավաբանների, դատախազների և այլ պաշտոնատար անձանց հետ:

ՈւԳԸ անդամների կողմից կատարված՝ Հայաստանի իրավական համակարգի ռեյտինգավորման մասին զեկույցը հրապարակվել է Լոնդոնում՝ հեղինակավոր Allen and Overy իրավաբանական ընկերության կողմից:

ՈւԳԸ անդամ Հարություն Հովհաննիսյանը ընդգրկվել է Նելսոն Մանդելայի անվան միջազգային դատախազի թիմում: Թիմը մեծ հաջողությամբ հաղթահարել է նախնական փուլը:

ՈւԳԸ անդամ Պետիկ Մկրտչյանը ընդգրկված է եղել Գերմանական IRZ հիմնադրամի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպված դատախազ մրցույթի՝ ԵՊՀ հաղթող թիմում:

ՈւԳԸ անդամ Անդրանիկ Շիրինյանը Երասմուս ծրագրի շրջանակներում 6 ամսով ուսանելու է մեկնել Բոլոնիայի համալսարանի իրավագիտության դպրոց:

2018թ. մարտին ազգային հավաքական թիմի կազմում անձամբ մասնակցել եմ Ֆրանկֆուրտի միջազգային դատախազ-մրցույթին, ինչպես նաև ճանաչվել եմ մագիստրատուրայի «Հանրապետության լավագույն ուսանող» հասարակագիտության ոլորտում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետային գործունեությունը անցնող կիսամյակի ընթացքում ԵՊՀ ՈւԳԸ կողմից ճանարչվել է գերազանց՝ զբաղեցնելով առաջին տեղը ֆակուլտետային ՈւԳԸ-ների շարքում:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ
2017-2018 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավաբանական կլինիկան 2017-2018 ուս. տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ձևավորել է ուսանողական խմբեր՝ քաղաքացիական/վարչական և քրեաիրավական մասնագիտացումներով: Կլինիկան են դիմել 38 ուսանող, որոնցից 36-ը բակալավրիատի 4-րդ կուրսի, իսկ 2-ը մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ են: Կլինիկա դիմած բոլոր ուսանողներն ընտրվել են՝ կազմավորելով 20 հոգուց բաղկացած քրեաիրավական և 18 հոգուց բաղկացած քաղաքացիական/վարչական խմբեր: Ավելի ուշ քրեաիրավական մասնագիտացմամբ 1 ուսանող հրաժարվել է կլինիկական գործունեությունից, ևս մեկը հեռացվել է դասախոս-կոորդինատորի առաջարկությամբ և կլինիկայի ղեկավարության որոշմամբ: 2017-2018 ուս. տարում կլինիկական դասընթացն անցել և իրավախորհրդատվական հերթապահություն են իրականացրել 36 ուսանող: Ի տարբերություն նախորդ տարիների, այս ուսումնական տարում կլինիկան իրավաբանական ծառայությունների մատուցման հետ կապված իր գործունեությունն սկսել է ավելի վաղ՝ 2017թ. սեպտեմբերի 11-ից և հաճախորդների ընդունելությունը դադարեցրել է ս.թ. ապրիլի 9-ից: 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակում իրավաբանական ծառայությունները կլինիկայում տրամադրվել են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ սկսած սեպտեմբերի 11-ից, երկուշաբթիից ուրբաթ օրերին ժամը 10:00-ից 14:00, երկրորդ կիսամյակում՝ սկսած փետրվարի 5-ից ժամը 10:00-ից 16:00:

Նշված ողջ ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայում անվճար իրավաբանական ծառայություններ են ստացել 150 քաղաքացիներ, որոնցից 100-ը քաղաքացիական, 21-ը վարչական, 14-ը քրեական և 15-ը Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատ կազմելու գործերով: Վերջինիս հետ կապված ուսանողները կազմել և քաղաքացիներին են հանձնել 7 ՄԻԵԴ գանգատ, իսկ դիմումներից 8-ի ուսումնասիրությամբ պարզվել և քաղաքացիներին ներկայացվել է ՄԻԵԴ դիմելու հիմքերի բացակայությունը: Կլինիկայում ընդունված 150 գործերից շուրջ 90-ը ավարտված է, որոնցից 41-ը դրական ելքով: Շուրջ 60 գործ դեռևս գտնվում է ընթացքի մեջ: Դրանք շարունակվելու

են մինչև գործի վերջնական լուծումը և փոխանցվելու են հաջորդ տարվա ուսանողներին հնարավոր շարունակության անհրաժեշտության դեպքում:

Տրամադրված իրավաբանական ծառայությունները հիմնականում վերաբերել են սեփականության, ժառանգության, ապահովահագրության, փոխառության, աշխատանքային և բանկային պայմանագրերի, մտավոր սեփականության, վարկային պարտավորությունների, խնամակալության, ալիմենտի բռնագանձման, ամուսնալուծության, որդեգրումը վերացնելու, սնանկության իրավահարաբերություններին: Ուսանողների կողմից կազմվել են հայցադիմումներ, դիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, տրամադրվել են իրավունքի վերաբերյալ պարզաբանումներ: Չնայած օրենքով ամրագրված սահմանափակումներին՝ որոշ գործերով ուսանողներին հաջողվել է նաև իրականացնել դատական ներկայացուցչություն: Ուսանողների կողմից կազմվել և հաճախորդին է հանձնվել ՀՀ Սահմանադրական դատարանին ուղղված դիմում, որով վիճարկվում է 1998թ. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ենթադրյալ հակասահմանադրական նորմի սահմանադրականությունը:

Կլինիկական դասընթացի ավարտին ուսանողները յուրաքանչյուր տարվա նման ստացել են ավարտական վկայականներ, բացի դրանից՝ կլինիկայի 4 ուսանող (Դիանա Դանիելյան, Արման Բաբախանյան, Ժաննա Հակոբյան, Գայանե Խաչատրյան) իրենց բարձր պատրաստվածության, բարեխիղճ աշխատանքի, հաճախորդների կողմից շնորհակալական նամակներին արժանանալու և իրավական խնդիրներին տրված արդյունավետ լուծումների համար պարգևատրվել են ռեկտորատի կողմից շնորհակալագրերով: Ռեկտորատի կողմից շնորհակալագրերով պարգևատրվել են նաև Իրավաբանական կլինիկայի դասախոս-փաստաբանները և աշխատակազմը:

Կլինիկայի գործունեության վերաբերյալ հասարակության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված տպագրվել են տեղեկատվական բուկլետներ, որոնք բաժանվել են տարբեր պետական և ոչ պետական մարմիններին, ինչպես նաև կլինիկա դիմած քաղաքացիներին: Վերջինիս արդյունքում շատ քաղաքացիներ կլինիկայի գործունեության մասին տեղեկացել են կլինիկա դիմած նախորդ քաղաքացիներից, սոցիալական կայքերից մեկում (Facebook) գրանցված ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կայք-էջից: Այնուամենայնիվ, հաճախորդների

մեծամասնությունը բանավոր պայմանավորվածությունների հիման վրա Իրավաբանական կլինիկա է ուղղորդվել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարի, ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակներից:

Իրավաբանական կլինիկան այս տարի ևս իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որին մասնակցության խնդրանքով դիմել են 17 ուսանող և անցել համապատասխան վերապատրաստում: Նրանցից 9-ը հանրակրթական դպրոցներ այցելելու կամ աշակերտներին ԵՊՀ-ում ընդունելու միջոցով՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ իրավունքի տարբեր թեմաներով անցկացրել են դասընթացներ: Դասավանդման համար ընտրվել են այնպիսի ոլորտներ, որոնք առօրյայում հաճախ են հանդիպում, և յուրաքանչյուր ոք կարող է առնչվել դրանց, մասնավորապես, սպառողական իրավունք, աշխատանքային իրավունք, ընտանեկան իրավունք, քրեական իրավունք և այլն:

Այս տարի Իրավաբանական կլինիկան այս ծրագրի շրջանակներում համագործակցություն է ձեռք բերել Երևանի և տարբեր մարզերի դպրոցների հետ, սակայն երկրում առաջացած քաղաքական պատճառներով պայմանավորված՝ ուսանողներին հաջողվել է դասեր վարել միայն Երևան քաղաքի դպրոցներում: Մարզերի և Երևանի մի շարք դպրոցների հետ պայմանավորվածությունները տեղափոխվել են 2018-2019 ուս. տարի:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ԱՄՆ Հայ իրավաբանական միության և Արցախի պետական համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրի հիման վրա Արցախի պետական համալսարանում գործարկվել է իրավաբանական կլինիկա, որի ձևավորման և կայացման գործում իր որոշակի աջակցությունն է ունեցել նաև ԵՊՀ իրավաբանական կլինիկան: Մասնավորապես, Արցախի պետական համալսարանի պատվիրակությունը այցելել է ԵՊՀ իրավաբանական կլինիկա: Այդ ընթացքում քննարկվել են Արցախում կլինիկայի արդյունավետ գործառնության հետ կապված հարցեր, տեղի է ունեցել փորձի փոխանցում անհրաժեշտ փաստաթղթերի կազմման, գործերի վարման, խորհրդատվությունների և այլ իրավաբանական ծառայությունների իրականացման, կլինիկական ծրագրերի բարեհաջող ընթացքն ապահովելու և այլ կարևոր հարցադրումների վերաբերյալ, ինչպես նաև այնուհետ ԵՊՀ իրավաբանական

կլինիկայի ղեկավարությունը մասնակցել է ԱՊՀ իրավաբանական կլինիկայի բացման պաշտոնական արարողությանը Արցախի Հանրապետությունում:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ իրավաբանական կլինիկան, համագործակցելով որոշ միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ, իրականացրել է տարաբնույթ ծրագրեր:

Մասնավորապես, 2017թ. հոկտեմբերին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները մասնակցել են *ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի* կողմից արդեն 7-րդ տարին ավանդաբար կազմակերպվող փախստականների իրավունքների վերաբերյալ ամենամյա դպրոցին, որին մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի, Գյումրու «Պրոգրես» համալսարանի և Երևանի Հայբուսակ համալսարանի իրավաբանական կլինիկաների ուսանողները: Դպրոցի ընթացքում քննարկվել են նաև փախստականների իրավունքով մասնագիտացված կլինիկական կրթության վերաբերյալ հիմնահարցեր: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում փախստականների իրավունքի ոլորտում համագործակցության նոր ձևերի մշակման ու դրանց իրագործմանն ուղղված քայլեր են իրականացվել, մասնավորապես համագործակցության հուշագիր է ստորագրվել *ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան»* բարեգործական ՀԿ-ի հետ, որի հիման վրա ԵՊՀ իրավաբանական կլինիկան սկսել է իրականացնել «Իրավունք բոլորի համար. Փախստականների իրավունք» ծրագիրը, որի շրջանակում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ավագ դպրոցների աշակերտներին և մանկավարժներին իրազեկել են փախստականների, ապաստան հայցողների և այլ տեղահանված անձանց իրավունքների վերաբերյալ: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում կլինիկայի 4 ուսանող այցելել են հանրապետության 8 ավագ դպրոց, որտեղ սեմինար-քննարկումներ են անցկացրել փախստականների իրավունքներին առնչվող հիմնահարցերի վերաբերյալ, որի համար ստացել են օրապահիկ: Վերոնշյալ համաձայնության հուշագրի շրջանակներում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և իրավաբանական կլինիկայի 2 ուսանող (Սիլվա Ավետիսյան, Ռոզա Առաքելյան) ներկայումս պրակտիկա են անցնում Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ում՝ որպես կազմակերպության փաստաբանների օգնականներ, ինչը հնարավորություն է տալիս նրանց կիրառել փաստականների և տեղահանված

անձանց իրավունքների ոլորտում նախորդ տարիների փախստականների իրավունքի դպրոցի արդյունքում իրենց ձեռք բերած տեսական գիտելիքները՝ համադրելով դրանք ոլորտին առնչվող պրակտիկ գիտելիքներով: Դրա համար ևս ուսանողները ստանում են օրապահիկ:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է շարունակել համագործակցությունը *ՄԱԿ ՓԳՀ-ի* և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ, որի շրջանակներում հատկապես քննարկվում է փախստականների իրավունքների պաշտպանության իրավաբանական կլինիկական ծրագիրը զարգացնելու հնարավորությունը: Վերջինիս ուղղված նախատեսվում է նաև առաջիկայում կլինիկան համադրել որոշ անհրաժեշտ տեխնիկայով և նյութերով: Բացի դրանից արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ ուսումնական տարվա սկզբին «Փախստականների իրավունք» խորագրով 8-ր դպրոցը կազմակերպելու վերաբերյալ:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերել «Գերմանական միջազգային համագործակցություն» (GIZ) կազմակերպության հետ: Այս ծրագրի շրջանակում անցկացվելու են մարդու հիմնարար (սահմանադրական) իրավունքների վերաբերյալ դասընթացներ ՀՀ երեք մարզերի (Տավուշ-ք.Դիլիջան, Շիրակ-ք.Արթիկ, Կոտայք-ք.Հրազդան) ավագ դպրոցներում:

Հաշվետու ժամանակահատվածում փոխըմբռնման հուշագիր է կնքվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և *Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի* հետ, որը նախատեսում է բազմաբովանդակ համագործակցություն՝ միտված միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային հանրային իրավունքի ոլորտում կրթության և հետազոտական գործունեության խթանմանը: Հուշագրի շրջանակներում նախատեսվում է առաջիկա տարիներին ստեղծել միջազգային հանրային իրավունքի իրավաբանական կլինիկա:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է զարգացնել համագործակցությունը *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի* հետ՝ ուղղված «Անչափահասների իրավունքներ» կլինիկական ուղղություն ձևավորելուն և այն կյանքի կոչելուն:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է շարունակել իր գործունեությունը՝ ուղղված «Առողջապահական իրավունք» մասնագիտացմամբ կլինիկական ծրագիր ձևավորելուն և զարգացնելուն: Այս առումով պլանավորվում է շարունակել համագործակցությունը ոլորտում գործունեություն ծավալող միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, նախորդ տարվա համագործակցության արդյունքում Իրավաբանական կլինիկայի որոշ ուսանողներ անցել են պրակտիկա «*Իրավունքի զարգացման կենտրոն*» ՀԿ-ում, իսկ այս տարի նույն կազմակերպությունը ցանկություն է հայտնել առողջապահական իրավունքի ոլորտում իրավաբանի թափուր հաստիքի համար աշխատանքի ընդունելու կլինիկայի մեկ ուսանողի: Բացի դրանից՝ հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկան համագործակցել է «*Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա*» ՀԿ-ի հետ՝ կապված իրենց դիմող տարեցներին անհրաժեշտ իրավաբանական ծառայություններ մատուցելու համար վերջիններիս կլինիկա ուղղորդելու հետ, դրա վերաբերյալ սոցիալական կայքերով հայտարարություններ են տարածվել, թեժ գիծ է գործել կազմակերպության շրջանակներում, սակայն այս ընթացքում ԵՊՀ իրավաբանական կլինիկա ոչ մի անձ, ուղղորդված այդ համագործակցության շրջանակում, չի դիմել:

2018-2019 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է նաև համագործակցել *ԱՄՆ Կոնեկտիկուտի համալսարանի իրավաբանական կլինիկայի հետ* և փորձի փոխանակման, ԱՄՆ համալսարանի դրական և արդյունավետ փորձը ձեռք բերելու և ընդօրինակելու նպատակով կատարել ճանաչողական այց ԱՄՆ: